ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱԺԽՈ-018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1. «ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեում, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովում (ԵԱՀԿ ԽՎ), Միջխորհրդարանական միությունում, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում և Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակությունների կազմերը հաստատելու մասին» Ազգային ժողովի խորհրդի ԱԺԽՈ-018-Ա որոշման.

1) 3-րդ հավելվածում՝ Միջխորհրդարանական միության Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Արսեն Թորոսյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Սարգիս Խանդանյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով,

2) 5-րդ հավելվածում՝ Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Մերի Գալստյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Միքայել Թումասյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով, ինչպես

նաև լրացնել «Տաթևիկ Գասպարյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ **Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆ**

2025 թվական, հոկտեմբերի 20
Երևան
ԱԺԽՈ-052-Ա